նակցում էին տեղական թուրքերը, որոնցից կարող եմ տալ վաճառականներ Համզայի, Հիւսէյին Կուլիի, Իբրահիմի և ուրիշների անունները: Կոտորածն ունէր բոլորովին կազմակերպված բնոյթ: Անկասկած, նախաձեռնութիւնը բխում էր բարձր իշխանութիւնից, իսկ թալանին ու կոտորածին մասնակցում էր տեղական պաշտօնէութիւնը: Ի հարկէ, եթէ իշխանութիւնը կամենար, ո՛չ թալան կը լինէր և ո՛չ կոտորած»:*)

Ագուլիսի կոտորածը մեծ հարուած էր հայ ժողովրդի համար, և հասկանալի է այն յուզումն ու ցասումը, որ առաջ բերեց հայկական բոլոր շրջաններում: Լուրը Երևան հասաւ դեկտ. 29-ին, Գորիսից: Երկու օր յետոյ, դեկտ. 31-ին, հնդկաերոպական հեռագրագծով հեռագիր ստացուեց Թաւրիզից, թէ՝ «Քարտէսի վրա Ագուլիսն այլևս գոյութիւն չունի. Ներսէս եպ.»: Յունու. 4-ին Մելիք-Թանգեան եպ.-ը հաղորդեց, թէ՝ «Ամենքը կոտորուած են: Մանրամասնութիւնները թոյլ չեն տալիս»:

Նոյն օրերին Հայաստանի կառավարութիւնը Բագուից էլ տեղեկութիւն ստացաւ, որ այնտեղ արտ.-գործ. նախարարի օգնական Խան Թեքինսկիի նախաձեռնութեամբ յատուկ խորհրդակցութիւն է գումարուել, որին մասնակցել էին և Ուսուպբէգովն ու Խան Խոյսկին և որտեղ մշակուել էր Հարաւային Զանգեզուրը, Գողթնը, Օրդուբաթն ու Նախիջևանը Ադրբէջանին ու Թիւրքիային հաւատարիմ մարտական մահմետական տարրերով բնակեցնելու և այդ նպատակով, առաջին հերթին, «Նախիջևանի շրջանի հարաւային մասը հայ տարրից մաքրագործելու» ծրագիրը: Ագուլիսի կոտորածը այս ծրագրի սկզբնական քայլն էր. Ներքին Ագուլիսում կոտորուեց մօտ 400 մարդ, Վերին Ագուլիսում 1000: Ողջ մնացին միայն մի քանի տասնեակ կանայք ու օրիորդներ, որոնք նէր տրուեցին Թիւրք սպաներին ու կոտորածի ղեկավարներին. այսպէս, վաճառական Փանեանի 16 ամեայ դեղեցկուհի աղջիկը բաժին հասաւ Էդիֆ բէյին:

Հայաստանի կառավարութիւնը ստացած տեղեկութիւնները օրը օրին հաղորդեց զնդ. Հասկելին ու դաշնակիցների ներկայացուցիչներին և բողոքներ ուղարկեց Բագու: Ադրբէջանի կառավարութիւնը ակզբում ուրացաւ եղելութիւնը, ապա հեռագրեց, թէ՝ «լուրերը չափազանց մեծացուած են» և, ի վերջոյ, յունու. 23-ին միայն, Հայաստանի կառավարութեան վճռական մերկացումների ու բողոքների տակ, ստիպուած եղաւ ընդունել փաստը, որը, սակայն, արդարացնում էր նրանով, որ կոտորածը եղել է Էջմիածնի, Երևանի ու Զանգեզուրի շրջաններից հայերի ձեռքով քշուած մահմետական գաղթականների կողմից:

Հայկական բողոքները իրական դարման չհասցրին և Հասկելից ու դաշնակից ներկայացուցիչներից. նրանք սահմանափակուեցին միայն ցաւակցութիւններով, պաշտօնական նկատողութիւններով, խորհուրդներով ու սաստումներով և գործնական միջամտութիւնից խուսափեցին. երկու դիւղ էր աւերուել, 1000—1500 մարդ էր կոտորուել — արժէ՞ր դրա համար աշխարհ իրար խառնել...

---

*) Տե՛ս Զանգեզուրի ու Գողթնի «Գործ»-ը Հ. Հ. Պատիրակութեան դիւանում: